ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «07» մայիսի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 23-Ա/Ք

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2018» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշումը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի մայիսի 7-ի N 22-Ա/Ք հրամանը՝ «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.03.2018 թ. N 247-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհուրդների միջոցով,

3) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական թեմաների ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

4) կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ